առաջացրեց հայերի մէջ։ Բաթումից մինչև Երևան, ամէն տեղ, նրան ցոյց տրուեց խանդավառ ընդունելութիւն։ Ընդունելութիւնը շատ ջերմ էր, նամանաւանդ, Հայաստանում։

Օգոստ. 20-ին գնդ. Հասկելը իր շքախմբով հասաւ Ղարաքիլիսա։

Գնացքը կանգ առաւ ծաղիկներով զարդարուած կամարի տակ։ Հասկելի վագոնի առջև դրուեցին պատուոյ պահակներ։ Կայարան էր հաւաքուած ահագին բազմութիւն։ Քաղաքացիական և զինուորական ներկայացուցիչները ներկայացան Հասկելին, որը դուրս եկաւ վագոնից և ժողովրդի ոգևորուած ծափերի ու «կեցցէ»-ների տակ դիտեց շարուած զօրքը, հարց ու փորձ արաւ զինուորներին, հետաքրքրուեց նրանց վիճակով։ Որբերի կողմից մի աղջիկ ծաղկեփունջ ներկայացրեց տիկ. Հասկելին։

Նոյն հանդիսաւորութեամբ Հասկելը անցաւ և Աղեքսանդրապոլից և օգոստ. 21-ի առաւօտեան հասաւ Երևան։ Քաղաքն ամբողջ զարդարուած էր դրօշակներով, գորգերով ու կանաչով։ Բոլոր խանութները փակ էին։ Փողոցներում տիրում էր արտակարգ կենդանութիւն։ Ամենքը դուրս էին եկել վեհաժողովի ներկայացուցչին ընդունելու։ Վարչապետը, բոլոր նախարարները, Խորհրդարանի նախագահը, զինուորական հրամանատարական կազմը, քաղաքապետը, քաղաքագլուխը, թեմական առաջնորդը, ամերիկեան, անգլիական և ֆրանսական ներկայացուցիչները — ամենքը կայարանում էին, ուր շարքով կանգնած էին զինուորները իրենց նուագախմբով։

Ընդունելութեան արարողութիւնից—վարչապետ Խատիսեանի ողջոյնի խօսքից, Հասկելի պատասխանից ու պատուոյ պահակի ընդունելութիւնից յետոյ, շքերթը մեկնեց քաղաք։ Առջևից գնում էին Սասունի և Շատախի ձիաւորները՝ ազգային տարազով և դաշնակից պետութիւնների դրօշակներով։ Նրանց հետևում էին Հասկելի ու վարչապետի և միւս դիմաւորողների ինքնաշարժները։ Քաղաքային ինքնավարութեան շէնքի առջև կանգնած էին որբերը թարմ պսակներով։ Աբովեան պողոտան լիքն էր անհաշիւ բազմութեամբ։ Հասկելին յատկացուած էր Երևանի լաւագոյն տներից մէկը, որի առջև կանգնած էր քաղաքաղօրը, անգլիական հնդիկ զինուորները, համքարութիւնները իրենց դրօշակներով։

Հասկելի հասնելուն պէս նուագախումբը հնչեցրեց «Մեր Հայրենիք»-ը։ Հասարակութիւնը ողջունեց որոտընդոստ ծափերով ու «կեցցէ»-ներով։ Հասկելը դիտեց զօրքը, հարց ու փորձ արաւ զօրքի սպառազինութեան և հագուստի մասին։ Զօրամասերը հանդիսաւոր քայլերով անցան նրա առջևից։

Ապա, բնակարանում, Հասկելը ընդունեց կառավարութեան, բանակի, քաղաքի և օտար պետութեանց ներկայացուցիչներին ու շնորհակալութիւն յայտնեց իրեն ցոյց տրուած ջերմ ու սրտաբաց ընդունելութեան համար։ Ժողովուրդը, խռնուած նրա բնակարանի առջև, երկար չէր ցրւում։ Վերջապէս, մեզ էլ յիշեց Վեհաժողովը...

Նոյն օրն և եթ Հասկելը երկար տեսակցութիւն ունեցաւ կառավարութեան նախագահի հետ։ Ցուսատու էին նրա խօսքերը. նա հաղորդեց, որ